



ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՐԻԱՆԱ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տնտեսության տարբեր ճյուղերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության աննախադեպ աճը, ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքների ստեղծումը տեղեկատվական հասարակության ծնավորման և զարգացման հիմքն են: Հետագայում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառությունը նպաստեց համընդհանուր տեղեկատվայնացման գործընթացի զարգացմանը, որն էլ, իր հերթին, սկիզբ դրեց կրթության տեղեկատվայնացմանը, ինչը 21-րդ դարի կարևորագույն խնդիրներից է:

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում մեծ ուշադրություն է դարձվում կրթության ոլորտում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման և կրթության տեղեկատվայնացման խնդիրներին, ու թեև այդ ուղղությամբ բավական աշխատանքներ են կատարվել մեր երկրում, այնուամենայնիվ, դեռևս կան բազմաթիվ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում:

**Հիմնաբառեր.** տեղեկատվական տեխնոլոգիաներ, կրթության տեղեկատվայնացում, հեռահաղորդակցության ոլորտ, կրթական հաստատություններ

JEL: I20, J24, J44

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունում քաղաքակրթության զարգացման հիմքը տեղեկատվական գործընթացներն են, որոնցում վճռորոշ դերակատարություն ունեն տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները: Ինչպես գիտենք, մարդու գործունեության տարբեր բնագավառներում ՏՀՏ ներդրումը նպաստել և նպաստում է կրթության

ուլորտի տեղեկատվայնացման գործընթացների սկզբնավորմանն ու զարգացմանը: Իսկ կրթության տեղեկատվայնացումը համակարգի կրթության բարեփոխմանն ու արդիականացման կարևոր պայման է, քանի որ կրթության ոլորտում են պատրաստվում և դաստիարակվում այն մարդիկ, ովքեր ոչ միայն ձևավորում են հասարակության նոր տեղեկատվական միջավայրը, այլև ապրում և գործում են այդ միջավայրում:

Վերջին տարիներին մեր երկրում կրթության բնագավառում իրականացվել են որոշակի աշխատանքներ S<S ներդրման և կիրառման ուղղությամբ, որոնք անհրաժեշտ պայմաններ են ստեղծել ոլորտի բարեփոխումների համար: Սակայն դեռևս լուրջ անելիքներ կան որակական առաջընթացի և գործընթացն անշրջելի դարձնելու համար, քանի որ կրթական համակարգում գործնականում կիրառվող ձևերը բավարար չկունություն չեն ապահովում:

Կրթության տեղեկատվայնացման գործընթացում առկա են մի շարք խնդիրներ, որոնք վերլուծելիս, նախևառաջ, հարկ է դրանք դասակարգել՝ ընդգծելով այն առանձնահատկություններն ու նախադրյալները, որոնք բնորոշ են մեր երկրին:

Կարելի է առանձնացնել ՀՀ-ում կրթության տեղեկատվայնացման հետևյալ խնդիրները.



Պճանկար 1. Կրթության տեղեկատվայնացման խնդիրները ՀՀ-ում

**Տնտեսական** խնդիրներից են կրթության տեղեկատվայնացման գործընթացի անբավարար ֆինանսավորումը՝ հատկապես մասնագիտական ուսումնական հաստատություններում: Այսպես՝ բավարար չէ համակարգիչների քանակը, եղածներն էլ արդեն հնացած են, ուսումնական հաստատություններն ունեն համակարգչայնացման, լիցենզավորված ծրագրային ապահովման, սարքավորումների, որոշ դեպքում նաև համացանցի հասանելիության անհրաժեշտություն: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերումը և ներդրումը, համացանցային կայքերի մշակումը և սպասարկումը, կրթության տեղեկատվայնացմանն ուղղված այլ միջոցառումների իրականացումը պահանջում են զգալի միջոցներ:

Ինչ խոսք, կրթության տեղեկատվայնացման խնդիրները լուծելու համար պահանջվում են լուրջ ֆինանսական միջոցներ, որոնք կարող են ապահովվել համատեղ՝ կրթական հաստատությունների բյուջեներից կատարվող հատկացումների և այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին: Այս համատեքստում առավել քան կարևոր է, որ տեղեկատվայնացման գործընթացներն իրականացնելիս կրթական հաստատություններն ուղղորդվեն մշակված ծրագրերով և լինեն հետևողական, ինչը ևս կպահանջի մշտական ծախսեր կատարել այս ուղղությամբ:

Սակայն պետք է հաշվի առնել նաև, որ մեր երկիրն ունի որոշակի առավելություններ SS ոլորտում, ինչն, անկասկած, կարևոր նախադրյալ է կրթության ոլորտի արդյունավետ տեղեկատվայնացման տնտեսական խնդիրները մեղմելու համար: Հայաստանը, լինելով ծրագրային ապահովման մշակման, էլեկտրոնիկայի և կիսահաղորդիչների արտադրության կենտրոն, դեռևս Խորհրդային Միության իշխանության տարիներին, ներկայումս էլ շարունա-

կում է տարածաշրջանում առաջատար դիրքեր զբաղեցնել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում, ինչը պայմանավորված է բավականին բարձր մրցակցային ներուժ ունեցող աշխատուժով, ՀՆԱ մասնաբաժնով, ինչպես նաև ընկերությունների թվի ու ընդհանուր շրջանառության աճի տեմպերով:

Ըստ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի «ՏՀՏ ոլորտը Հայաստանում. 2017» հետազոտության տվյալների՝ «Ծրագրային ապահովում և ծառայություններ» և «Ինտերնետ ծառայությունների պրովայդեր» հատվածներն ընդգրկող ոլորտի ընդհանուր եկամուտը հասել է 765,1 մլն ԱՄՆ դոլարի, ինչը կազմում է 37% աճ՝ 2015 թ-ի համեմատությամբ<sup>1</sup>: Նշված զեկույցի համաձայն՝ այսօր Հայաստանում ակտիվ գործում են մոտ 650 ՏՀՏ ընկերություններ, որոնց գերակշիռ մեծամասնությունը՝ 80%-ը, տեղակայված են մայրաքաղաքում: Միևնույն ժամանակ, մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ, գործող ընկերությունների թիվը ևս տարեցտարի աճում է ՀՀ՝ մասնավորապես Շիրակի և Լոռու մարզերում: Հավելենք, որ 2015–2017 թվականներին ավելի քան 600 նոր ընկերություն է հիմնադրվել, իսկ ոլորտի աշխատատեղերի թիվն աճել է մոտ 2700-ով:

Նշենք, որ, ըստ վերոնշյալ աղբյուրի, 2017 թվականին ՏՀՏ ընկերությունների թիվը հասել է ավելի քան 800-ի, ինչը փաստում է, որ վերջին տարիներին գրանցվել է տարեկան ավելի քան 10% աճ: Նշված ընկերություններից ակտիվ գործում են 650-ը, որոնց կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն տեղական ընկերությունները՝ 69%: Անդրադառնալով հեռահաղորդակցության ոլորտին՝ նշենք, որ մեր երկրում գործում է 33 ընկերություն, որոնց հիմնական ծառայությունները ներառում են շարժական և ֆիքսված կապի, մալուխային և անլար համացանցի, SS ենթակառուցվածքի տրամադրման (օրինակ՝ վեբ հոսթինգ) և VoIP ծառայություններ: Հատկանշական է, որ հեռահաղորդակցության ոլորտում գործող ընկերությունները, ի տարբերություն SS բնագավառի այլ ծառայություններ մատուցող ընկերությունների, իրենց ծառայությունները նախատեսում են ավելի շատ ներքին շուկայի, քան արտահանման համար:

Այսպիսով՝ ՏՏ ոլորտի աճի տեմպերը բավական բարձր են՝ պայմանավորված մրցակցային առավելություններով, ինչն էլ կարևոր նախադրյալ է կրթության տեղեկատվայնացման գործընթացի արդյունավետության բարձրացման համար:

**Տեսական–նորմատիվային** հիմնախնդիրներից են, նախևառաջ՝ ուսումնական հաստատություններում ՏՀՏ կառավարման հստակ մեթոդաբանության, ինչպես նաև դասավանդման տեսական մեթոդաբանության բացակայությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների տնտեսական տեսանկյունների անբավարար մշակումը:

Նորմատիվային հիմնախնդիրներին են վերաբերում պետական կառավարման մարմինների կողմից կրթության տեղեկատվայնացման հստակ սահմանված չափորոշիչների և նորմատիվների, ինչպես նաև ազգային հայեցակարգի բացակայությունը: Թեև ներկայումս գոյություն ունեն ՏՏ ոլորտը կարգավորող օրենսդրանորմատիվային բազմաթիվ ակտեր, այնուամենայնիվ,

<sup>1</sup> Տե՛ս ՏՀՏ ոլորտը Հայաստանում, Հայաստանում ՏՀՏ ոլորտի հետազոտություն, 2017, ՁԻՀ, էջ 2, աղբյուրը՝ [http://www.eif.am/files/2082/Report/2017-ICT-Industry-Report\\_arm.pdf](http://www.eif.am/files/2082/Report/2017-ICT-Industry-Report_arm.pdf)

կան մի շարք հարցեր, որոնք պահանջում են պետական կարգավորում: Այսպես՝ նախ նշենք, որ 2000 թ. ի վեր այդ բնագավառը ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է որպես տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը՝ մասնավորապես ծրագրային ապահովման և ծառայությունների բնագավառներում: Այնուհետև՝ 2001 թ. ՀՀ կառավարության հավանությանն արժանացավ ՀՀ ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը, իսկ 2008-ին՝ ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգը: 2001 թվականին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց ՏՏ զարգացմանն աջակցող խորհուրդը (ՏՏՁԱԽ), որի նախագահը ՀՀ վարչապետն է: Խորհուրդը, կապող օղակ դառնալով կառավարության և ՏՏ բիզնեսի, կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, դոնոր և միջազգային կազմակերպությունների միջև, կազմակերպում է տեղեկատվական հասարակության կայացմանը և ՏՏ արդյունաբերության խնդիրների լուծմանը նպաստող քննարկումներ<sup>2</sup>:

Օրենսդրանորմատիվային փաստաթղթերի շարքում կարևորվում է նաև 2010 թվականի փետրվարին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010–2012 թթ.)»<sup>3</sup>: Հետագայում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցման արդյունքում ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության կայացմանն ուղղված 2013–2015 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը նպատակաուղղված էր ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության շարունակական զարգացման ապահովմանը, ինչպես նաև, վերջին զարգացումներից ելնելով, ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության կայացմանը նպաստող նոր միջոցառումների կիրառմանը:

Այսպիսով՝ ՀՀ-ում, պետական կարգավորման տեսանկյունից, ՏՏ ոլորտը ուշադրության կենտրոնում է, ինչը, սակայն, չի կարելի ասել կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և կրթության տեղեկատվայնացման գործընթացի վերաբերյալ: Այս առումով, կարող ենք նշել միայն, որ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է «հեռավար ուսուցում» հասկացությունը, և որ հեռավար (դիստանցիոն) ձևով կարող են իրականացվել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերը, ինչը, կարծում ենք, սահմանափակում է հանրակրթության և նախնական ու միջին մասնագիտական կրթություն տրամադրող ուսումնական հաստատությունների՝ ՏՀՏ-ն արդյունավետ և նպատակաուղղված կառավարելու հնարավորությունները:

Անհրաժեշտություն կա զարգացնելու կրթության տեղեկատվայնացման գործընթացին առնչվող օրենսդրական դաշտը, վերամշակելու ուսումնական հաստատություններում կրթության տեղեկատվայնացման խթանմանն ուղղված համապատասխան օրենքները, իրավական ակտերը, օրենսդրորեն ամրագրելու ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայու-

<sup>2</sup> Տե՛ս «ՏՏ ոլորտի խթանման ծառայությունների 2010 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը՝ հաստատված 20.05.2010, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=58689>

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010–2012 թթ.)՝ հաստատված 25.02.2010 թ.:

թյունների որոշ բաղադրիչներ, որոնք պետք է գործադրվեն ՏՀՏ կիրառմամբ, ինչպես նաև համացանցի միջոցով:

**Տեխնիկական-ծրագրային** խնդիրներից է կրթության ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ և նպատակաուղղված կիրառման խոչընդոտների վերացումը, որոնց պատճառով դանդաղում է կրթության տեղեկատվայնացման գործընթացը, և համակարգչայնացման նոր փուլին անցում չի կատարվում: Կարևորվում են նաև տեղեկատվության պաշտպանության և տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերը, սա վկայում է այն մասին, որ դեռևս չկա համապատասխան ինստիտուցիոնալ, գիտական-տեղեկատվական ենթակառուցվածք՝ վերոնշյալ խնդիրների լուծման համար:

Կրթության ոլորտում ժամանակակից տեղեկատվական համակարգերն արդյունավետ կիրառելու համար նախ անհրաժեշտ է բոլոր կրթական՝ հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններն ապահովել անհրաժեշտ քանակությամբ և որակով համակարգչային ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաներով: Հանրակրթության ոլորտում համակարգչային հագեցվածության աստիճանը տարեցտարի աճում է, սակայն դեռևս բավարար համարել չի կարելի. օրինակ՝ 2016–2017 թթ. տվյալներով Երևանում աշակերտների թիվը, մեկ համակարգչի հաշվով, 19.3 է, իսկ Տավուշում նույն ցուցանիշը, որն, ի դեպ, ամենացածրն է՝ 9.7 է<sup>4</sup>: Ինչ վերաբերում է համացանցի հասանելիության աստիճանին, ապա նշենք, որ նույն ժամանակահատվածում համացանցին միացված են եղել հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները:

Ըստ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) 2017 թ. գործունեության ամփոփ հաշվետվության՝ իրականացվել են մի շարք միջոցառումներ կրթական ուսումնական հաստատությունների տեխնիկական և ծրագրային խնդիրների լուծման նպատակով: Մասնավորապես՝ կատարվել է 1420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող Հայաստանի կրթական ցանցի ընթացիկ սպասարկումը, ինչպես նաև շահագործվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը, ինչի շնորհիվ դասընթացներ են կազմակերպվել ՀՀ 1 և ԱՀ 16 համայնքների 503 աշակերտի և 329 ուսուցչի համար<sup>5</sup>:

Ուշադրության են արժանի նաև այն կայքերն ու պորտալները, որոնք շահագործվել են.

«Հայկական կրթական միջավայր» պորտալը և ֆորումը	• <a href="https://www.armedu.am">https://www.armedu.am</a> • <a href="https://forum.armedu.am">https://forum.armedu.am</a>
«Հեռավար ուսուցում» համակարգը	• <a href="https://elearning.armedu.am">https://elearning.armedu.am</a>
«Պաշարների շտեմարան» կայքը Ռպրոգրամային կայքերը	• <a href="https://lib.armedu.am">https://lib.armedu.am</a> • <a href="http://schoolsites.am">http://schoolsites.am</a>

Կրթական հաստատություններում «Մայքրոսոֆթ» ընկերության արտոնագրված ծրագրային համակարգեր օգտագործելու նպատակով ՀՀ կառավարության և նշված ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջա-

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013, 2014, 2015, 2016, 2017 թթ. հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, աղբյուրը՝ [http://armstat.am/file/article/sv\\_03\\_17a\\_5150.pdf](http://armstat.am/file/article/sv_03_17a_5150.pdf):

<sup>5</sup> Տե՛ս ԿՏԱԿ 2017 թվականի գործունեության ամփոփ հաշվետվություն, աղբյուրը՝ <http://ktac.am/index.php/am/documents/index/3>

նակում ձեռք են բերվել Windows և Office ծրագրային համակարգերի 18000 արտոնագրեր, որոնք տրամադրվել են ՀՀ կրթական ուսումնական հաստատություններին:

Վերջին տարիներին, համագործակցության առումով, դրական տեղաշարժ է արձանագրվել SS ոլորտի կազմակերպությունների և ՀՀ բուհերի միջև, ինչի մասին վկայում են հետևյալ փաստերը<sup>6</sup>:

- 2004 թ.-ից Synopsys Inc. ընկերության կողմից իրականացվում են ծրագրեր ՀՀ տարբեր բուհերում՝ ՀԱՊՀ, ԵՊՀ, ՀՈՀ, ԵԿՏԱ:
- 2006թ. հիմնադրվել է Գյումրու SS կենտրոնը՝ առաջին SS ուսումնական կենտրոնը Հայաստանի երկրորդ քաղաքում, որը ստեղծվել է Հայ օգնության ֆոնդի և ՁԻՀ ի համագործակցությամբ:
- Հայ հնդկական SՏՏ գերազանցության կենտրոնը ստեղծվել է Հայաստանի կառավարության և Հնդկաստանի կառավարության համատեղ ծրագրի շրջանակներում 2011թ.:
- Մայքրոսֆթ ինովացիոն կենտրոնը ստեղծվել է Մայքրոսֆթ ընկերության, ՁԻՀ ի, ԱՄՆ միջազգային գարգացման գործակալության և ՀՊՀՀ-ի համատեղ ցանքերով:
- 2011թ-ին սկսել է գործել ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, 12-18 տարեկան հազարավոր պատանիների տրամադրելով արտադրոցական ուսուցում թվային մեդիաների ոլորտում:
- Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի Մոբայլ ծրագրերի տարածաշրջանային լաբորատորիան ստեղծվել է 2011թ.:
- 2013թ.-ին ՀՊՀՀ-ում Նեյշնլ Բնություններ ընկերության և ՁԻՀ-ի հետ համատեղ ստեղծվել է Հայաստանի ազգային ինժեներական լաբորատորիան:
- «Samsung» ընկերության և ԵՊՀ-ի համատեղ ցանքերով 2014թ. ԵՊՀ-ում բացվել է «Samsung» կրթական կենտրոնը:
- 2015թ.-ին հիմնվել է IBM-ի հետ համատեղ նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը: Կենտրոնի մասնաճյուղերը Երևանի պետական համալսարանի տարածքում պաշտոնապես բացվել է 2016թ. ի նոյեմբերին:
- 2016թ-ից գալուստիվել է «Բլուական դպրոց» կրթամշակութային նվաճումներ:
- 2017թ.-ին մեկնարկել է ԵՊՀ-ի և ISIC նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի համատեղ Մեծ տվյալների մագիստրոսական ծրագիրը:
- 2017թ-ի մարտին ՀՀ կառավարության և Ֆիլիպ Մորիս ընկերության միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

<sup>6</sup> Տե՛ս SՏՏ ոլորտը Հայաստանում, Հայաստանում SՏՏ ոլորտի հետազոտություն, 2017, ՁԻՀ, էջ 36, աղբյուրը՝ [http://www.eif.am/files/2082/Report/2017-ICT-Industry-Report\\_arm.pdf](http://www.eif.am/files/2082/Report/2017-ICT-Industry-Report_arm.pdf)

Սակայն պետք է նշել, որ բուհերի համագործակցությունը սահմանափակվում է ուսումնական ծրագրերով ու վերապատրաստման դասընթացներով, որոնց հիմնական նպատակը որոշակի ընկերությունների և, ընդհանուր առմամբ, ոլորտի համար բարձրակարգ մասնագետներ պատրաստելն է: Տեխնիկական-ծրագրային խնդիրների լուծման համար, կարծում ենք, հատկապես սուղ ֆինանսական հնարավորությունների պայմաններում, նպատակահարմար է ենթակառուցվածքների ձևավորման, կիրառման և զարգացման հարցում գործուն աջակցության ապահովումը:

**Մարդկային ներուժ և մասնագիտական որակավորում:** Այստեղ հարկ է առանձնացնել հետևյալ խնդիրները. համապատասխան որակավորմամբ մասնագետների պակաս, համակարգչային անբավարար գիտելիքներ, որակավորման բարձրացման նպատակով դասավանդողների շահադրման ցածր աստիճան, ինչի պատճառով S<S արդյունավետ չեն կիրառվում: Կրթության ոլորտում S<S ներդրման, ինչպես նաև տեղեկատվայնացման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված են մարդկային և մասնագիտական ներուժից: Ներկայումս առավել կարևորվում է ժամանակակից SS մասնագետների առկայությունը ինչպես կրթության, այնպես էլ տնտեսության մյուս ոլորտներում: Ուստի մարդկային և մասնագիտական ներուժի ցածր մակարդակը ևս լուրջ խնդիր է: Այսօր կրթության բնագավառի՝ հատկապես հանրակրթության և միջին ու նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատողների վարձատրության համակարգն անընդունակ է տնտեսության մյուս ճյուղերի, նաև ոլորտում առկա մասնավոր հաստատությունների համեմատությամբ, ինչը բարձր որակավորմամբ մասնագետների արտահոսքի պատճառ է դառնում: Վարձատրության համակարգն ու մակարդակը չեն նպաստում որակյալ աշխատակազմի ներգրավմանն ու պահպանմանը: Թեև ներկայումս որևէ ոլորտի վերաբերյալ չկան համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություններին առնչվող հստակ պահանջներ, սակայն դա հիմք է, որ դասավանդողները համակարգչով աշխատելու տարրական գիտելիքներ և հմտություններ չունենան. խոսքը հատկապես վերաբերում է ավագ տարիքի և հանրակրթության բնագավառում դասավանդողներին:

Մասնագիտական ուսումնական հաստատությունները դեռևս հակված չեն իրենց մասնագետներին վերապատրաստելու նպատակով սեփական բյուջեից մեծ հատկացումներ կատարելու: Ըստ այդմ՝ S<S ներդրման և կիրառման գործընթացին զուգընթաց, արդիական է դառնում համապատասխան մասնագետների ուսուցման և վերապատրաստման հարցը:

Այս խնդիրներով զբաղվել և զբաղվում են մի քանի կենտրոններ՝ համապատասխան ծրագրերի գործադրմամբ: Այսպես՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որի գործունեության հիմքը Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման շարունակականության ապահովումն է, իր ծրագրերը նպատակաուղղում է ուսումնական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների առավելագույն և արդյունավետ օգտագործմանը՝ բարձրորակ կրթության օրեցօր աճող պահանջները բավարարելու համար<sup>7</sup>:

<sup>7</sup> Տե՛ս <http://www.eif.am/arm/projects/classmate-pc-and-teachers-pc/>

Նշենք, որ ծրագրերն իրականացվել են բացառապես հանրակրթության ոլորտում, մինչդեռ մասնագիտական կրթություն տրամադրող ուսումնական հաստատություններում ՏՀՏ կիրառումն առավել կարևոր նշանակություն ունի: Այս մակարդակում ուսուցման և վերապատրաստման հարցը լուծվում է ուսումնական հաստատությունների ներքին միջոցների հաշվին:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին որոշակի աշխատանքներ են կատարվել կրթության ոլորտում համապատասխան մասնագետների ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ, այնուամենայնիվ, կա ուսուցման ամբողջ գործընթացի ինստիտուցիոնալացման խնդիր:

Ամփոփելով կրթության ոլորտում ՏՀՏ կառավարման և կրթության տեղեկատվայնացման գործընթացի հիմնախնդիրներին առնչվող մեր դիտարկումները՝ նշենք, որ անհրաժեշտ է իրականացնել լուրջ կառուցվածքային փոփոխություններ, քանի որ ՏՀՏ դերի թերագնահատումը ՏՏ ոլորտի զարգացման ներկայիս տեմպերի պայմաններում լուրջ տնտեսական խնդիրներ կարող է առաջացնել: Այս համատեքստում պետք է կարևորել համապատասխան իրավական փաստաթղթերի մշակումը՝ ՏՀՏ կիրառման ընթացքում իրավական հարաբերությունների կանոնակարգումն ու կարգավորումն ապահովելու համար: Հարկ է ստեղծել կրթական նոր մեթոդներ, ուսումնական նյութերի մատուցման և փոխանցման նոր միջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ են մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կտան սովորողներին ձեռք բերելու էական գիտագործնական արդյունքներ:

Կարծում ենք՝ պետք է օրենսդրորեն սահմանվեն ուսումնական հաստատությունների կողմից ՏՀՏ մշակման, ուսումնական գործընթացում դրանց կիրառման, տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոխհարաբերությունների կանոնները, քանի որ ՀՀ-ում գործող օրենսդրությունը չի նպաստում կրթության ոլորտի տեղեկատվայնացման գործընթացի ակտիվացմանը, էլեկտրոնային ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև տեղեկատվական հասարակության ձևավորմանը: Իսկ ՏՀՏ ոլորտը շարունակական բուռն զարգացում է ապրում և թափանցում հասարակական կյանքի բոլոր բնագավառներ, սակայն կրթության համակարգում դրանց կիրառման իրավական կարգավորման կառուցակարգերը ակնհայտորեն չեն բավարարում մերօրյա պահանջները: ***Առաջարկում ենք մշակել ՀՀ կրթության ոլորտի տեղեկատվայնացման ազգային հայեցակարգ***, որի ընդունումն ու հետևողական կիրառումն թույլ կտա ավելի արդյունավետ դարձնել ՏՀՏ կառավարման գործընթացը՝ պատասխանելով այն հարցին, թե ո՞րն է կրթության ոլորտում ՏՀՏ դերն ու նշանակությունը, և, միևնույն ժամանակ, տեղի կունենա կրթության համակարգի պարտադրված հարմարեցում նոր չափորոշիչներին: Նոր հայեցակարգը հիմնված կլինի ՀՀ-ում կրթության և ՏՏ բնագավառները կարգավորող օրենսդրանորմատիվային ակտերի, զարգացման ռազմավարության և այլ ծրագրերի վրա:



### Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010–2012 թթ.)՝ հաստատված 25.02.2010 թ.:
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, էլ. աղբյուր՝ [http://armstat.am/file/article/sv\\_03\\_17a\\_5150.pdf](http://armstat.am/file/article/sv_03_17a_5150.pdf):
3. ՏՏ ոլորտի խթանման ծառայությունների 2010 թվականի ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում՝ հաստատված 20.05.2010, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=58689>
4. ԿՏԱԿ 2017 թվականի գործունեության ամփոփ հաշվետվություն, էլ. աղբյուր՝ <http://ktak.am/index.php/am/documents/index/3>
5. ՏՀՏ ոլորտը Հայաստանում, Հայաստանում ՏՀՏ ոլորտի հետազոտություն, 2017, ՉԻՀ, էլ. աղբյուր՝ [http://www.eif.am/files/2082/Report/2017-ICT-Industry-Report\\_arm.pdf](http://www.eif.am/files/2082/Report/2017-ICT-Industry-Report_arm.pdf)
6. Роберт И.В., Основные направления научных исследований в области информатизации профессионального образования / И.В.Роберт, В.А.Поляков. М., “Образование и информатика”, 2004.
7. Петухова Е., Информационные технологии в образовании. М., “Успехи современного естествознания”, № 10, 2013.
8. Уваров А. Ю., Информатизация школы: вчера, сегодня, завтра. М., “БИНОМ”. Лаборатория знаний, 2013.
9. <http://www.eif.am/arm/projects/classmat>

**МАРИАНА КОЧАРЯН***Ассистент кафедры управления АГЭУ*

***Перспективы информатизации образования в Республике Армения.*** – Беспрецедентный рост применения информационных технологий в разных отраслях экономики, образование современных информационно-телекоммуникационных инфраструктур - основа создания и развития информативного общества. Широкомасштабное использование в дальнейшем информационных и телекоммуникационных технологий содействовало всеобщему развитию процесса информатизации, что, в свою очередь, послужило началом информатизации образования как одной из важнейших проблем 21 века.

Как во всем мире, так и в Армении, большое внимание уделяется внедрению информационной и телекоммуникационной технологий в сферу образования и проблемам информатизации образования, и несмотря на то, что в нашей стране проведено много работ в этом направлении, существует еще много проблем, требующих решения.

**Ключевые слова:** *информационные технологии, информатизация образования, сфера телекоммуникаций, учебные заведения.*

JEL: I20, J24, J44

**MARIANA KOCHARYAN***Assistant at the Chair of Management at ASUE*

***The Perspectives of Education Informatization in the Republic of Armenia.*** – The unprecedented increase of the use of information technologies in various sectors of the economy, the creation of modern information and telecommunication infrastructures are the basis for the creation and development of information society. Later the large-scale application of information and telecommunication technologies contributed to the development of holistic informatization process. This process, in its turn, set up education informatization, which is one of the most important issues of the 21st century.

In Armenia, like all over the world, much attention is paid to the investment of information and telecommunication technologies in the field of education, as well as to the issues of education informatization. Although much work has been done in our country, there are still many problems that require solution.

**Key words:** *information technology, education informatization, telecommunications, educational institutions.*

JEL: I20, J24, J44